ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

26 մայիսի 2021 թվականի N 103 - Ա

ՎԱՐԴԱՆ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 2-րդ և 7-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Վարդան Էդուարդի Գյուլամիրյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Վարդան Էդուարդի Գյուլամիրյանին 2021 թվականի մայիսի 26-ից 12 ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության պետի (ծածկագիր՝ 52-24.3-Ղ2-1) պաշտոնում:

2. Փորձաշրջանը համակարգող նշանակել Ծառայության գլխավոր քարտուղարի տեղակալ (ծածկագիր՝ 52-Ղ2-1) Ժիրայր Խառատյանին:

3. Ծառայության սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության պետի (ծածկագիր՝ 52-24.3-Ղ2-1) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնող Վարդան Էդուարդի

Գյուլամիրյանի հետ 2021 թվականի ապրիլի 1-ին կնքված N 4 ժամկետային աշխատանքային պայմանագիրը 2021 թվականի մայիսի 26-ից համարել լուծված:

4. Աշխատավարձը սահմանել համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Տ. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

26.05.2021

X

ՏԻԳՐԱՆ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Signed by: ULIKHANYAN TIGRAN 2812830492

Երևան